

Ն Ա Ն Ա Մ Ե Կ Ն Ի Չ

ԵՒ ԻՐ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ



(Տես Բզմվպ. 1915 էջ 279-293)

Մանօթ է մեզ թարգմանչին Յառաջա-
րանին մէջ տուած տեղեկութենէն, թէ Նա-
նա օգտուած է Միջագետքի վանքերու մէջ
գտած մեկնութիւններէն կամ Հարց ճա-
ռերէն, որոնցմով իբրև ժիր մեղու մը,
հերք տարուան ընթացքի մէջ, յօրինած
է իր գրուածքը. աւելորդ չէ կրկնել հոս
այս եղելութիւնը աւանդողին խօսքերը.
«որոյ (Նանայի) փոյթ ի մտի եղեալ վաղ-
վաղակի ի ձեռն ուժգին պահոց և աղօ-
թից, ջան ոչ փորը յանձին բերէ՛ շրջա-
գայութեամբ երկց ամաց, յածեալ ընդ
անապատս յերկրին Միջագետաց, ուր և
յուսայր իսկ զգիւտ զրոց ուղղափառ վար-
դապետացն. և հանդիպեալ խնդրոյն՝ ա-
ռաջնորդութեամբ վերին ի թամոցն, շա-
րաղէր համառօտարար ի բազմաց հաւա-
քելով՝ մի ըստ միողէ ոճով զմեկնութիւն
յոհաննեան սրբոյ աւետարանին, փոխարե-
նելով յատրի լեզուոյն ի հազարական լե-
զու»։ Նանա եւս իր մեկնութեան ընթաց-
քին մէջ չի ծածկեր իրեն առաջնորդ ե-
ղող վարդապետներու կարծիքը յիշատակե-
լը, և տեղ տեղ անոնցմէ կը խոտորի, համո-
զիչ չգտնելով անոնց պատճառարանու-
թիւնը. այսպէս օրինակ իմն «ԶԱստուած
ոչ ոք ետես» համարին մեկնութեան մէջ
կ'ըսէ. «Ոմանց այս թուի ոչ ըստ կարգի
նախասացելոցն դասել այժմ բանի. զի
մինչև ցայս վայր գերկրորդ շնորհացն որ
եհեղ ի մեզ՝ ճառեաց, և այժմ ասէ՝ «զԱս-
տուած ոչ ոք ետես երբէք». այլ ոչ զե-
ղեցկապէս իմացան, վասն զի յոյժ ըստ
պատշաճութեան շարադրի բանս (20)։
Դարձեալ, «ի վաղև անդր տեսանէ զՅի-
սուս» խօսքը մեկնած ատեն, կը յիշէ թէ
վարդապետներէն մէկը «ի վաղիւ»ը, մկըր-
տութեան օրը կ'իմանայ, մինչդեռ Դիցեալ երբէք
այլազգ կը հասկնայ. «Իսկ մեզ համոյ
digitised by A. R. A. R. ©

Թուեցաւ երկրորդ իմն գալուստ իմանալ
զՏեանն՝ զկնի մկրտութեան, վասն զի
զմկրտութեան օրէ Մատթէոս ճառեաց »
(23)։ Դժբախտարար Նանա չի դնիր
անուամբ թէ ո՞վ ի վարդապետաց այս
կամ այն կարծիքը կը պաշտպանէ, որով
քիչ շատ կարենայինք իր աղբիւրները
ճանչնալ. իր սովորութիւնն է ընդհանուր
կերպով, ոմանք կամ յօրինակի ոտքք (23),
յօրինակս ինչ (222, 282, 285), ըսելով,
յիշել. այսպէս ուր կը մեկնուի «Եկն դար-
ձեալ ի կանա զալիլիացոց ուր արար
թաւուն ի գինի, և անդ էր թազաւորագն
մի» են, խօսքը, կ'ըսէ. «Ոմանց այսպէս
թուեցաւ եթէ նոյն սա նա է զոր Մատ-
թէոսն պատմեաց. այլ ոչ ճշմարտապէս
իմացան» (էջ 96). այսպէս յուզեալ ա-
լիքներուն վրայ Յիսուսի գնալուն և ապա
խաղաղելուն հրաշքը կը զանազանէ, և
ուրիշ մեկնիչները յիշելով անոնցմէ կը
տարբերի. «Զայստիկ ոմանք յատուցոցն
համարեցան լինել զոր Մատթէոսն պատ-
մեաց. այլ ոչ ճշմարտապէս իմացան »
(էջ 133)։ Յայտնի է թէ Նանայի յիշած
կարծիքները ընդհանրապէս նախկին մեկ-
նիչներէն են, և անոնց մէջ հարկ է փըն-
տենք մեկնութեան այս տարբերութիւն-
ները, գործածած հեղինակները գտնելու
համար։ Յաջորդ վկայութեան մէջ որոշ
կ'ըսուի մեկնիչի մը վերաբերիլը. «Ոմանք
ի քաղցամեայցն (մեկնիչ ըսել է) ասացին
զայս ատեն՝ նոյն լինել զոր Մատթէոս
պատմեաց. այլ ոչ ինչ ի դէպ այն իցէ».
և պատմառոններն ալ մի առ մի կու տայ.
«վասն զի զայն ի կապեճուաւում բժշո-
կեաց՝ մահճովք առաջի նորա մատուցա-
նելով, իսկ այս՝ յԵրուսաղէմ էր, մերձ ի
Սիլովամ. նա և այս ի Զատկի յաւուր
շարաթու էր. իսկ այն՝ ոչ ի Զատկի և
ոչ յաւուր շարաթու. և սմա հրամայեաց
բառնալ զմահինս իւր, և յետ աւուրց ինչ
հանդիպի սմա ի տաճարի անդ և ասէ ա-
հաւասիկ ողջացար՝ այլ մի ևս մեղանչեր.
Իսկ վասն նորա ոչ այսպիսի ինչ պատմի
տութեան օրը կ'իմանայ, մինչդեռ Դիցեալ երբէք
(էջ 103)։ Հ. Միք. Զամչեան,
խօսելով Պատմու-

Թեան Բ հատորին մէջ Նանայի այս մեկնութեան վրայ կ'ըսէ. « յօրինեաց զայն աստորեմէ՝ քաղեայ ի մեկնութեան Յովնանու Ոսկեբերանի» (էջ 441). Իրեն հետեւելով նոյնը կը կրկնեն Հայկազեան բազրքի նախադրունքը գրողը, և Հ. Բ. Վ. Սարգսեան՝ երբ Նանայի ոճը վերլուծած ատեն կը գրէ. « Մէկ խօսքով նշմարիտ աշակերտ է Ս. Յովնան Ոսկեբերանի, և իր մտածութիւնները այնքան կը նմանին մեծ նարտարարանի մտածութեանց, որ կարծես Սարկաւազապետը գործածած ըլլայ արքեպիսկոպոսին մեկնութիւնը, ասորի լեզուի մէջ, թէպէտև սա զերբ մ'ըլլայ որ ոչ ոքի ծանօթ է՝ »:

Յաջորդովս պիտի ապացուցեմ թէ ըստուգիւ օգտուած է մեր մեկնիչը Ոսկեբերանին: Եթէ Նանայի մեկնութիւնը տուն սա տուն Ոսկեբերանի համանուն գրքին հետ բաղդատելու ըլլանք, ակն յայտնի պիտի տեսանք երբեմն բառական քաղումովը, շատ անգամ ալ անոր իմաստներու համատարութիւնը: Կը բերեմ քանի մը օրինակ այս նմանութիւններէն՝ դիպուածով ընտրուած այս կամ այն էջէն.

Ուրիշք

Նաև

Եւ ընդէր իսկ տան՝ արք զայս ֆրիտոսս զի այնչափ ստատի վարքը ընդդէմ նոցա. ուր ոչ ուրից երբէք երեկ արարեալ այնպէս. և ի թշնամանին զնա և յանդունել, և սա մարտեք կոչել և թէ՛ զն գոյ ի քեզ. (ՄՅԿ. ՅՎԷ. ՏԿ. Ի Պօլտ. 1717, էջ ԲԵԲԳ):

Խնդրել է բանս եթէ էր ազգաւ այնքան զայրանայր մինչև խորագան ևս առնէր և մեծագոյն սաստիկ արտօսք հանէր. ուր ոչ երբէք երեկ արարեալ այնպէս. յորժամ սամարացի զնա կոչէին այլովքն հանդերձ. (էջ 38):

Տես և զվաստակելոյն օրինակ զոր պատմեաց առ ի նշանակել զանչափ իտոնարութիւնն ի հետիտոս զնալ այլ ոչ երիտորս ստանալոյ, (էջ 73):

Այլ ֆրիտոսս աստ եւ կեալ զհարտական և զիշխանականն արդեօք ի բաց հանեալ զկնիցադն միջոս, և զաշխատասիրութիւն և զգած վարս ի ներքս անէր. վասն զի ոչ իշով և կամ այսպիսեօք ըրէր, այլ այնպէս ի հետիտոս ընթաց. նայր յաճախապէս մինչև վաստակէր ի ճանապարհորդութեանէն. (էջ ԳԳԳ):

Իսկ ընդէր ոչ ասաց թէ յանուն Հօր եկ արտօսք... արդ եթէ ոչ իտրով զօրութեամբ զայս տանէր զի՛նջ առաւելագոյն ունէր քան զտարեցաւն... (էճԹ):

Նա և ոչ այլոյ անուամբ զմեռեալն կոչեալ ի գերեզմանէն, որգունակ մարգարէքն ի հունու յառնեն Տեսան Աստուծոյ, և կամ զկնի՛ ստացեալոս յանուն Յիտուսի ֆրիտոսի, (287):

Այսպէս դարձեալ Ոսկեբերանի կը հետեւի երբ « որ ոչ մտանէ ընդ դուռն » համարը մեկնած ատեն կ'ըսէ. դուռն է Աստուծոյ պատուիրանքը. դունապանը՝ է Մովսէս. ոչխարաց զաւիթն է՝ Եկեղեցին: « Որ յտաջ քան զիս եկին զողջ էին և աւազակք » խօսքը կը նշանակէ Յուդա Գալիլիացին ու թեւտարը, և անոնցմէ վերջ Սաղուկեցիները (Ձեռ. էջ 242):

Կարելի էր դեռ երկարել համեմատութեանց այս շարքը, սակայն աւելորդ կը համարիմ, արդէն իսկ ապացուցուած իրողութիւն մը ենթադրելով զայն: Եւ եթէ Նանայի մեկնութիւնը Ոսկեբերանի հետեւողութիւն մ'ըլլաւուն համար կը կորսնցնէ մասամբ մը իր ինքնուրոյնութիւնը և յարգը, այլ ուրիշ արժէք մը կ'առնու մեկնութիւնս այդ պատճառով որ՝ Ոսկեբերանի այս գրքին Հայկական հին թարգմանութեան ամբողջական օրինակ մը չուրինք ձեռքերնիս և շատ համառօտուած ձեւի տակ մեզի հասած է ան: Ուրեմն ստոյգ է թէ Նանա իրօք իր առջև ունեցած է Ս. Հօրս գրուածքը և քայլ առ քայլ հետեւած է անոր, առանց երկարորէն ընդօրինակելու՝ նախամեծարելով ամփոփումն ընել ճոխ իմաստներուն, և այնքան արուեստով կատարած է իր փոխառութիւնները, որ ամբողջութեան նոյն գոյնը ստուած է: Իսկ ուր կը շեղի Ոսկեբերանէ կրնայ նշան մ'ըլլալ մեզի թէ ուրիշ մատենագրի մը գրքէն կը կատարէ մի և նոյն գործողութիւնը: Եւ յիշուի Ոսկեբերանէ զատ, օգտուած կը տեսնուի Նանա նաև Մերեբրիանուի ճառերէն. որովհետև ինչպէս կ'ուզեմ յաջորդ քաղդաստութիւններով ցուցնել, բացի քանի մը զազափարներէ ուր նմանութիւնը յայտնի է, կան նոյն իսկ բառական զուգարդիպու-

1. Dei Tes. patr. e bibl. էջ, 26.

Թիւններ՝ որ դիպուածի հետեանք չի կըր- նար ըլլալ:

Սեփրիսնս

Նոնս

Ի՞նչ մի ինչեպէ՛ տըրտու- աննութիւն անգիտութեան զգործութիւն յառաջ բերել զան շարքաներն: Թէ ո՛ր հոգի գնա... մի՛թէ անգիտութեան բարբառի- ցէ և չօրն ստելն, Թէ ո՛ր ես Ազա՛մ. և այս բարբառ այն բարբառոյ ընկեր է: Հարցանէ ֆրեյտտո Թէ ո՛ր հոգի գնա, Հարցանէ և Աստուած ի հին կտակարան- քն, Թէ ո՛ր քի և Աբէլ եղ- բայր քո՛:

(Տպ. Վենետիկ, 1830, էջ 13-14)

Ի՛նչ հարցանելն, ո՛ր հոգի գնա, ոչ անգիտութեան եր, զի և Հայր հարցանէր. Ո՛ր ես Ազա՛մ. և ցիւային: Ո՛ր է հոգայրն քո. և քՄովսէս. Զհնչ է որ է ձեռնն քու՛ (էջ 285):

Ի՛նչ միտ զնէ նոցա որ շուրջն կային. եթէ ցա- նու, առէ, Հայր, զի Հայր կոչեմ զնա, և հայտնու- թիւն ինչ է Աստուծոյ՝ որ- ան զոգի կարծեց, մի՛ լեցի գործակից հայտնչիս. ապա Թէ կոչեմ զմեռանն, և լսէ հրամանին, ար- զեամբք իսկ առջ գնան, զէս ճշմարտութեան (էջ 17):

Ի՛նչ վայր ստեղծ զնէ է միտս լսողացն, եթէ հա- կատակ զիս ի՞նչ Հօր զու առէք և հայտնի, և այժմ հանդիմանել եմ յարուցա- նել զմեռանս. արդ եթէ հակատակ եցեմ Հօր և հայ- տնի, մի լեցի զործակից հայտնչիս. ապա եթէ լեցի զգործակից, արգիսմբք ա- զոգի զճշմարտութիւնն (287):

Աւելորդ է ինծի բննել Թէ Նանա ուղ- զակի Սեբերիանոսէ՝ օգտուած է, Թէ եր- կուըը միասին երրորդ աղբիւրի մը կը կարտին. բազմաթիւ են Ս. Հարց Թէ՛ Ղազարոս յարութեան այս անցըը մեկ- նողները, և նիթէն օտար պիտի ըլլար անոնցմէ որուն ազդեցութիւնը մասնանշել կարենալս:

Անցողակի ըսեմ սակայն Թէ Սեբերիա- նոսի՝ և Մամբրէի Ղազարոս յարութեան ճառին մէկ կտորին հետ նմանութիւն մը տեսած էր ատենօք Սեբերիանոսի ճառե- րուն հրատարակիչը (էջ 16), և Հ. Ն. Անդրիկեան՝ Մամբրէի վրայ խօսելով՝, զայն աւելի շեշտած էր. սակայն Սեբե- րիանոսի և Նանայի, ինչպէս նաև Նանայի ու Մամբրէի մէջ եղած յարաբերութիւնը

կը համարիմ Թէ նոր հրատարակ կ'ըլլէ: Ինչպէս ըսի, Նանայի մեկնութեան յորդորակներուն վրայ խօսած ժամանակ, յայտնի կը տեսնուի որ Նանայի Թարգ- մանիչը՝ կամ այլ ոք՝ Մամբրէի ի Յա- բութիւն Ղազարոս ճառին վերջաբանէն յորդորակի նիւթ մը վերուցած է. բայց և ի հակառակէն Մամբրէի անուան տակ հրատարակուած վասն յարութեան Ղա- զարոս երկրորդ ճառը՝ կազմուած է՝ ան- ծանօթ մէկէ մը՝ քարելով Նանայի մեկնու- թեանն և ազոցանելով Մամբրէի առաջին ճառին մէջ: Կը դնեմ հոս ցանի մը կտոր- ներ զլրատորներէն, յայտնելով միանգա- մայն կասկածս Մամբրէի ճառին հարա- զատութեան վրայ:

Նոնս

Մ-ֆրի

Նախ զայն ցուցանէ Թէ լուծի հիւսնորթիւնն այն տիրաբար զնա մահադու- ցանել, քան Թէ քոքր ինչ (273):

Քուցանէ Թէ հիւսնորթ- Թիւն ոչ ունի իրանու- Թիւն մահացուցանել զնա, բայց սուգ ինչ ժամանակ (57):

Խոտովեաւ. այսինքն հրամայեաց զալ արժմու- Թեան և զբիւլ զարտօսել կամաւորաբար. ցուցանել լով՝ քի յորժամ զիջանէ յայտասիկ ի բնականս, ցու- ցանելով զճմարտ մար- զեղութեան կամաւոր կիրք. այլ ոչ անորն մեր յար- Բաւարի է կրից մարմնոյ. զի Թէզու և յարաբառոցս առ զճարտինն, այլ ոչ եր- քնք ես առիկ մարմնոն շարժել ի քեզիսանն. այլ յորժամ կամէր՝ զիջանէր ի կերակուրս և յըմբել և ի ցուն, և յորժամ կա- մէր՝ վերաբերէր զինն յայնցանէ որ ի բնութեան, վասն զի ինքն իր(տն)ստեղ- ծագործ բնութեանս (284):

Նոնս

Մ-ֆրի

... նախ զի զազակցու- Թիւնն ի մեր վտակցութիւն ցուցէ: զարժեալ զի սա- ժան ինն և կէտ զայն վար- զագիտէ. այնքան արտա- սուել նաւասացելոց՝ որք զյարութեան յոյս յան- մինս հաստատունս ունի- ցին, որպէս ինքն զՂազա- րոսն. զարժեալ անանելով զմեռան վարք է արտա-

... զի զազակցութիւնն իւր ի մեր վտակցութիւն ցու- ցէ: զարժեալ զի սաճման և կէտ զայն վարդապե- նէ, այնքան արտասուել նաւասացելոց, որք զյա- րութեան յոյս յինքեանս ունիցին. զարժեալ զի տե- սանելով զմեռանն, վարա- ճ է արտասուել ի երայ մար- զայն, որ ի սկզբանէ տա-

1. Բազմավեկ 1904, էջ 352-8.
2. Տպ. Վենետիկ 1833, էջ 55-76, ուր հրատարակ- լին ծանօթութիւնը արժանի է զիտարգրեանս:

տակ է վերայ մեղացն որ անզգեցոյց ազգի մարդ,
ի սկզբանէ գմաէ մասան... կան... (66),
զեցոյց ազգի մարդկան... (285).

Բերած կտորներուս՝ ինչպէս նաև դեռ
մնացեալ շատերուն մէջ՝ օրինակութիւնը
այնքան բառական է, որ նմանութիւննե-
րէն աւելի տարբերութիւնները զմեզ կը
հետաքրքրեն, ուղղելու համար՝ ըստ ի-
մաստին՝ Նանայի կամ Մամբրէի քնազի-
րը:

Ատորի մեկնիչը ձեռքին տակ ունեցած
կը տեսնուի դարձեալ այնպիսի հեղինակ-
ներ որ անվաւեր աւետարաններէ և կամ
մատենագրութիւնէ օգտուած են. կը յիշէ
օրինակ իմն Մամարացոյն կուռքերը թա-
ղելու պատմութիւնը (էջ 69-70). հե-
տաքրքրական է ի ծնէ կուրին նկարագի-
րը (179). կամ հետեւալ կարծիքները,
թէ Յիսուս նախ Յուդայի ոտքը կը լուս-
նայ և ապա կարգաւ միւս աշակերտնե-
րունը (272), թէ զՅիսուս ձաղելու հա-
մար սպասատրները Հրեայներէ պարզև
ալ կ'ընդունէին (453), թէ Նորուստէմէ
դրկուած քահանայները և Ղեւտացիները
մկրտուած էին Յովհաննէսէ (20) և այլն:
Տարակոյս չկայ որ այս տեսակ անցքե-
րու մէջ ալ Ոսկերեանի համանուն մեկ-
նութիւնն է իր առաջնորդը, այլ ոչ միակը:

Հուսկ կը տեսնանք որ Նանա շատ ան-
գամ իր հակառակորդներուն կարծիքը կը
յիշատակէ, երբեմն նոյն իսկ երկայն վը-
կայութիւններ մէջ բերելով. օրինակ իմն
«Քո էին և ինձ հոտուր զնոսս» խօսքին
մեկնութեան մէջ (423) և այլուր. այլ
հաւանական է ենթադրել թէ այդ անցքե-
րը հերետիկոսաց զրքերէն ուղղակի ընդօ-
րինակելէն աւելի, արձագանգը լոկ կ'ըլ-
լայ անոնց մեկնութեան:

Այսքան առ այժմ, մատնանշելու հա-
մար թէ Նանա որ մատենագիրներէ օգ-
տուած է. գուցէ մանր քննութիւն մը թէո-
ղոր Մոպսուեստացոյ համանուն մեկնու-
թեան կամ ուրիշ մատենագիրներու գրու-
թիւններուն նորագոյն առնչութիւններ և
բեան հանէ:

Անցողարար յիշեցի առաջ մեկնութեանս
հայերէն թարգմանուելուն պատճառը և
ժամանակը . թարգմանիչը համեստու-
թեամբ կը ծածկէ իր անունը, և մենք
յակամայս կը ստիպուինք յարգել այս իր
խոնարհ զգացումը, որովհետև բաւական
փաստ չունինք Չաքարիա կաթուղիկոսի
կամ ժամանակակից ուրիշ ծանօթ մատե-
նագրի մ'ընծայելու թարգմանութեանս ար-
դիւնքը:

Պարզ է և մաքուր թարգմանչիս լեզուն,
և հազիւ քանի մը զարտուղի ձևերու կը
հանդիպինք, ինչպէս նաև հետեւալ ար-
տասովոր բառերուն. «Հոգոյն սրբոյ վե-
րկիտրեամբն» (էջ 16), «հաև ծոցն տա-
րացոյցարեւոտրեամբ զառագաստի ինչ ու-
նի նշանակ» (20). «ուր սրբոցն խորս-
նադատարիւնք յերկնիցն հրաւիրէ յառա-
գաստ» (36). «անդուստ զգաստացեալք ի
միտ առին զփանխասացուածն» (42). «զի
և այնու զկամացն աներկոտրիս (երկու
չըլալը) զիւր և զհօր ամենայն ուստեք
ցուդցանէ» (250) են:

Իր ուղղագրական յատկանիշ գրչա-
գրին՝ կը պակսի բայերուն վերջը շատ
անգամ յ գիրը. զոր օրինակ կը գրէ. կո,
բատնա, գա, ի վերա են: Չ գրի տեղ եր-
բեմն կը փոխանակէ ս. այսպէս սգաստա-
նալ, սզուշանալ, սգալ, սգնուլ, սգեստ.
և գ. փոխանակ կ' օրինակ իմն յանգար-
ծակի, անգանէր, են:

Կը զննւմ աստ՝ իբր նմուշ՝ թարգմանչին
յառաջարարն և մեկնութեան առաջին
ճառը:

Հ. Ք. ՉՐԱՔԵԱՆ

